ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 դեկտեմբերի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

174
(3205)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՍՈԹՔՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՏԵՂԱՔՆՆՈՒՄ ԵՆ ԱՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկություններ էր ստացել, որ օրեր առաջ Գեղարքունիքի մարզի Սոթքի հանքում ադրբեջանական եւ հայկական կողմերը սահմանազատման աշխատանքներ են իրականացրել:

Մենք դիմել էինք ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի գրասենյակ՝ պարզելու համար, թե ինչ գործընթացներ են ընթանում:

-Մենք տեղեկություններ ունենք, որ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Սոթքի փակ հանքում սկսել են սահմանազատում իրականացնել: Ի՞նչ իրավիճակ է այնտեղ, արդյոք սահմանազատման աշխատանքնե՞ր են այժմ իրականացվում:

-Սոթքի հանքավայրի սահմանային հատվածում կատարվել են համատեղ տեղազննման աշխատանքներ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության ներկայացուցիչների կողմից:

-Ըստ մեր տեղեկությունների՝ ադրբեջանցի եւ հայ զինվորականները քարտեզով հանքի տարածքում են արդեն մի քանի օր: Իրակա՞ն են այս տեղեկությունները, թե՞ ոչ: Եթե այո, ապա ո՞ր քարտեզներով, ի՞նչ փաստաթղթերով է այդ սահմանազատումն իրականացվում:

-Ո՛չ, տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

-Սահմանազատում իրականացնելու համար անհրաժեշտ է հանրաքվե, եթե հանրաքվե չի արվել, ինչպե՞ս են նման գործողություններ իրականացվում:

-Սահմանազատման հետ կապված աշխատանքները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ եւ ԱԺ-ի կողմից վավերացված՝ «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգով:



Նախօրեին՝ դեկտեմբերի 11-ին, Արցախի ներկայացուցչության շենքում իրականացված խուզարկությունից հետո ArmLur.am-ի աղբյուրները փոխանցեցին մեզ, որ հնարավոր է՝ մինչեւ տարեվերջ փակեն կամ վերջնականապես խլեն շենքը Արցախի իշխանություններից: Արցախի պաշտոնյաներից որեւէ մեկը չմեկնաբանեց մեր տեղեկությունները, բայց եւ այնպես չբացառեցին, որ խուզարկությունից հետո, հնարավոր է, նաեւ փակեն շենքը: Կլինի մինչեւ տարեվերջ, թե տարեսկզբին, իրենց է միայն հայտնի, բայց, այնուամենայնիվ, տհաճ անակնկալների Արցախի իշխանությունները սպասում են: Արցախի պաշտոնյաները նաեւ չեն բացառում, որ կլինեն ձերբակալություններ: Նրանք էլ են գիտակցում, որ առաջին թիրախը Արցախի 5-րդ նախագահ Սամվել Շահրամանյանն է: Հիշեցնենք, որ դեկտեմբերի 11-ին Քննչական կոմիտեն խուզարկություն էր իրականացրել Երեւանի Նաիրի Զարյան 17/Ա հասցեում գտնվող Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքում: Կոմիտեի գործողությունները սկսվել էին ժամը 11:00-ին եւ ավարտվել 16:30-ի սահմաններում: Քրեական վարույթը, որի շրջանակում իրականացվել էր խուզարկության գործողությունը, նախաձեռնվել է 2025 թվականի հունիս ամսին: Ինչպես հայտնել է փաստաբան Ռոման Երիցյանը, այն կապված է ենթադրյալ տնտեսական հանցագործության հետ: Փաստաբանը նաեւ նշել էր, որ հունիսից սկսված գործի շրջանակում, ըստ իր տվյալների, հարցաքննվել էր միայն «Արդշինբանկ» ՓԲԸ-ի տնօրենը: Քննչական կոմիտեն նախօրեի խուզարկությունից առգրավել էր մեկ համակարգիչ եւ մի քանի այլ իրեր, որոնք տեղավորել էին կարմիր, փոքրիկ պայուսակում:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ համապետական ընտրություններին ընդառաջ ընդդիմադիր դաշտում առայժմ ակտիվ են Ռոբերտ Քոչարյանի կողմից գլխավորած «Հայաստան» դաշինքը եւ բարերար ու գործարար Սամվել Կարապետյանի կողմից նոր ձեւավորված «Մեր ձեւով» շարժումը: Մնացածները կուլիսային աշխատանքների մեջ են կամ, լավագույն դեպքում, գրասենյակներ են հիմնում, բացում, վերաբացում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, մի շարք արտախորհրդարանական ընդդիմադիր ուժեր պարբերաբար հանդիպումներ են ունենում՝ քննարկելու համապետական ընտրություններին ընդառաջ իրենց անելիքները: Մեր տեղեկությունների համաձայն՝ այդ ուժերն են «Հայ ազգային կոնգրես»-ը (ՀԱԿ), «Սասնա ծռեր»-ը, «Ապրելու երկիր»-ը, «Նժար» սահմանադրական շարժումը, «Հաղթանակ» կուսակցության նախագահ, քաղաքային պլանավորող Վիկտոր Մնացականյանը եւ այլք: «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության անդամ Գեւորգ Սաֆարյանը ոչ հերքեց, ոչ հաստատեց մեր տեղեկությունները, որ իրենք պարբերաբար հանդիպում-քննարկում են ունենում վերոնշյալ ուժերի հետ: «Ես նման տեղեկություն չունեմ: Բազմաթիվ մարդկանց հետ քննարկումներ ունենում ենք, որոնց մասին հանրայնացնում ենք: Այն հարցին, թե ունեցել են հանդիպում «Միասնության թեւեր» շարժման առաջնորդ Արման Թաթոյանի հետ, Սաֆարյանը կրկին նշեց, որ տեղյակ չէ: Անդրադառնալով համապետական ընտրություններին մասնակցելու եւ իրենց կողմից թեկնածու առաջադրելու հանգամանքին՝ Սաֆարյանը նշեց, որ առայժմ համապետական ընտրություններին մասնակցելու որոշում չունեն:

Վերջին 26 տարիներին ղեկավարելով Եղվարդ, ապա Նաիրի համայնքները՝ ղեկավար Նորայր Սարգսյանը կարծես միլիոնատեր է դարձել: Նախ նշենք, որ Նաիրի խոշորացված համայնքի մեջ ներառված են 8 բնակավայրեր՝ Նաիրի, Արագյուղ, Բուժական, Զովունի, Զորավան, Սարալանջ, Պռոշյան եւ Քասախ: 8 բնակավայր համակարգող Նորայր Սարգսյանը 1999 թվականից Եղվարդի համայնքապետն է եղել, եւ այժմ էլ՝ խոշորացումից հետո, շարունակում է ղեկավարել արդեն Նաիրի համայնքը: Այս տարիների ընթացքում համայնքի ղեկավարը դարձել է միլիոնատեր: Մասնավորապես, Նորայր Սարգսյանի 2023 թվականի հաշվետու տարվա հայտարարագրի համաձայն՝ նրա տարեկան եկամուտը կազմել է 24 մլն դրամ. նախորդ տարվա համեմատ այն գրեթե 8 միլիոնով նվազել է: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներկց պարզեց, որ Սարգսյանն ունի 10 անշարժ գույք՝ 5 հողամաս, հողին ամրակցված 3 անշարժ գույք, 2 արտադրական նշանակության շինություն: Անշարժ գույքերը ձեռք են բերվել տարբեր տարիների՝ «ժառանգության» կամ «գնման» եղանակով: Խոշորացված համայնքի ղեկավար Սարգսյանը հայտարարագրել է 1982 թվականի արտադրության, ՄՏԶ-82 մակնիշի տրակտոր: Համայնքի ղեկավարի՝ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջին հայտարարագրի համաձայն, որ ներկայացվել է 2022 թվականին, անշարժ գույքերը փոփոխության չեն ենթարկվել:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ «ԱՆՏԻՖԵՅՔ»TV-Ի ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՀԵՏ

ԱԲՍՈՒՐԴԻ ՊԱՏԻ ԱԿՑԻԱՆ ԵՎ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Դեկտեմբերի 10-ին՝ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, «Անտիֆեյք» ծրագրի աշխատակիցները բողոքի ակցիա իրականացրին Ազատության հրապարակում: «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը զրուցեց «Անտիֆեյք»-ի գլխավոր խմբագիր Աստղիկ Մաթեւոսյանի հետ:

-Տիկին Մաթեւոսյան, բացվածծ են այցելությունները կալանավորված Նարեկ Սամսոնյանի եւ Վազգեն Սաղաթելյանի համար: Եթե այո, խնդրում ենք պատմել, թե ինչ տրամադրություններ ունեն նրանք:

-Ես Նարեկ Սամսոնյանի փաստաբանն եմ, սակայն պետք է նշեմ, որ տեսակցությունները թույլատրվում են միայն փաստաբաններին եւ մոտ ազգականներին: Պատկերացրեք՝ նրանք այն աստիճանի վտանգավոր հանցագործներ են, որ անգամ տեսակցությունները սահմանափակ են: Ազգային ժողովի պատգամավորներն անգամ չեն կարող այցելել նրանց:

-Սա ինչի՞ մասին է խոսում: Ինչո՞ւ են նույնիսկ պատգամավորների այցերը արգելված:

-Սա խոսում է պարզ մի իրողության մասին՝ նրանք հետապնդվում են քաղաքական դրդապատճառներով: Սա քաղաքական հաշվեհարդար է: Հենց այդ պատճառով էլ մենք առանց երկմտելու նրանց անվանում ենք քաղաքական բանտարկյալներ եւ խղճի հալածյալներ: Նրանք լիովին համապատասխանում են Եվրոպայի խորհրդի համապատասխան բանաձեւում նշված քաղաքական բանտարկյալի բոլոր չափանիշներին:

Նրանց երկուսի տրամադրությունն էլ բարձր է: Հալածանքները չեն տկարացնում նրանց՝ ընդհակառակը, ավելի են ուժեղացնում: Մի քանի ամիս առաջ էլ կրկին կալանավորված էին, եւ սա արդեն հերթական կալանքն է՝ մեկ ու կես տարվա ընդմիջումից հետո: Իրենց համար այս գործընթացը բացահայտ ծիծաղելի է: Այլ բնորոշում դժվար է գտնել, քան՝ աբսուրդ, խայտառակություն: Ահա թե ինչու մեր խորհրդանշական ակցիայի շրջանակում ունենք «աբսուրդի պատ», որտեղ մասնակիցներն ու անցորդները կարող են գրել իրենց կարծիքը Հայաստանում տեղի ունեցող աբսուրդային իրավիճակի մասին, որը ստեղծվել է քաղաքական բանտարկյալների շուրջ:

Այսօր մենք ունենք գրեթե հինգ տասնյակ քաղաքական բանտարկյալ: Բնականաբար, այս հալածանքները ոչ մի կերպ չեն կարող կոտրել Նարեկին եւ Վազգենին: Նրանք ավելի են ամրանում: Իսկ Նիկոլ Փաշինյանը՝ ռեժիմի ղեկավարը, իր գործողություններով ցույց է տալիս, որ արագ քայլերով մոտենում է բռնատիրական համակարգ հաստատելու նախերգանքին:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

Ո՞Վ Է ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ ՔՆՆԱԴԱՏԱԾ ՀԱՅՐ ԱՍՈՂԻԿԸ

Իշխանության կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի դեմ ընթացող պայքարում առավել կոշտ գնահատականներով է հանդես գալիս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Թանգարանների եւ արխիվի տնօրեն Հայր Ասողիկ աբեղա Կարապետյանը: Նա հրապարակային իր հստակ դիրքորոշումը ներկայացրել էր դեռ 2023 թվականի դեկտեմբերի 31-ին, երբ Հանրային հեռուստաընկերությունը եթերում չհեռարձակեց Վեհափառի ամանորյա ուղերձը:

«Ողորմելի եք եւ մեղկ դուք՝ բոլորդ՝ Հանրային հեռուստաընկերության ղեկավարներ ու պատասխանատու անձեր», - այսպես էր արձագանքել Հայր Ասողիկը Հանրայինի քայլին՝ այն համարելով խիստ անպատշաճ:

Աբեղայի գնահատմամբ՝ նրանք վնաս են հասցնում քրիստոնյա Հայաստանի կյանքին. «Քանի դեռ կմնաք այսպես ողորմելի եւ նենգ, զրկվում եք որեւէ աջակցությունից, հարցազրույցից. ձեզ համար փակ են Մայր Աթոռի Թանգարանների եւ Արխիվի դռները:

Ամոթ եւ պարսավանք Առաջին ալիքին, որ գոյություն ունեք նաեւ Ազգային Եկեղեցուց ստացվող հարկերով»,- նշել էր նա:

Հայր Ասողիկ աբեղան մինչ օրս պահպանել է իր սկզբունքայնությունը՝ հավատարիմ մնալով Մայր Աթոռին եւ Վեհափառ Հայրապետին: Իշխանության այն բոլոր հայտարարություններին, թե իբր Կաթողիկոսը «ուխտադրուժ» է եւ պետք է

«ազատել Վեհարանը», նա պատասխանել է հնազանդության, խոնարհության ու խոհեմության կոչերով՝ դիմելով հավատացյալ ժողովրդին շարունակել աղոթքը, որպեսզի Տիրոջ օժանդակությամբ եւ Հայոց Հայրապետի առաջնորդությամբ եկեղեցին շարունակի իր ազգաշեն ու հայրենանվեր առաքելությունը:

Մի քանի տվյալներ՝ Հայր Ասողիկ աբեղա Կարապետյանի մասին

Հայր Ասողիկը (ավազանի անունը՝ Արթուր) ծնվել է 1978 թվականին Երեւանում: Սովորել է սկզբում Ղազարոս Աղայանի անվան միջնակարգ դպրոցում, ապա՝ Սուխումիի Հովհաննես Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում:

1995 թվականին ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարան:

2000 թվականի դեկտեմբերի 25-ին՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, ձեռամբ Տեր Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի՝ ձեռնադրվել է սարկավագ: Մեկ տարի անց ավարտել է ճեմարանը եւ ծառայության անցել Վեհարանում՝ նախ որպես դիվանադպետի քարտուղար, ապա՝ Վեհափառ Հայրապետի գործավարքարտուղար:

2002 թվականի սեպտեմբերի 1-ին՝ Սուրբ Աստվածածնի գոտու գյուտի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տեր Սիոն եպիսկոպոս Ադամյանի՝ ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԲՈՂՈՔԱՐԿՎԻ

Դատախազությունը կբողոքարկի ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Մանուկյանի կալանքը տնային կալանքով փոխարինելու որոշումը: Այս մասին հայտնեցին գլխավոր դատախազությունից:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Սուրեն Մանուկյանի խափանման միջոց կալանքը փոխվել է: Նրա նկատմամբ կիրառվել է տնային կալանք ու բացակայելու արգելք:

Հիշեցնենք՝ 2022 թվականի օգոստոսի 11-ից քրեական գործ էր հարուցվել եւ քրեական հետապնդում էր սկսվել Սուրեն Մանուկյանի նկատմամբ: Նրան մեղադրում էին խմբի կազմում «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանի հորը առեւանգելու եւ նրա որդիներից առանձնապես խոշոր չափերի գումար շորթելու համար:

Քրեական գործով Սուրեն Մանուկյանի նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել կալանավորումը:

Մանուկյանն առաջադրված մեղադրանքը համարել է շինծու, չի ընդունել այն եւ իրեն մեղավոր չի ճանաչել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Սամվել Կարապետյանի փաստաբանական խումբը հայտարարություն է տարածել.

«2025 թ. նոյեմբերի 18-ին Հակակոռուպցիոն դատարանը բավարարել էր քննչական խմբի անհիմն միջնորդությունը՝ երկու ամսով երկարաձգելով ազգային բարերար, գործարար Սամվել Կարապետյանի ակնհայտ ապօրինի կալանքը, իսկ որոշման հրապարակմանը նախորդել էր «Հայկական ժամանակ» օրաթերթի համանման բովանդակությամբ հրապարակումը: Նշվածը իրավական աբսուրդի հերթական բաղադրիչն էր, քաղաքական հետապնդման հերթական փաստն էր:

Վերաքննիչ դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ժ. Մելիքսեթյանի, որոշեց մերժել փաստաբանական խմբի եւ դատախազության վերաքննիչ բողոքները:

Այս ամենն իրավական ցանկացած տիրույթից դուրս է եւ հաստատապես վերացնում է քրեական դատավարությունը Հայաստանի դատարաններից:

Սամվել Կարապետյանի ապօրինի կալանքի երկարաձգման հիմք Առաջին ատյանի դատարանը վկայակոչել էր միայն խոչընդոտելու, իբրեւ ռիսկը, իսկ Վերաքննիչ դատարանը փաստացի համաձայնել է դրա հետ՝ ուղիղ անտեսելով երեք անհերքելի փաստական տվյալ. 1) մեղադրանքի նվազագույն հիմնավորվածության բացակայությունը, 2) շուրջ 6 ամիս ապօրինի կալանքը 3) այլընտրանքային խափանման միջոցների հնարավորությունը: Չնայած մեղադրանքների աբսուրդայնությանը, մեր կողմից հարկադրված ներկայացված նման միջնորդությունը մերժելու իրավական որեւէ հնարավորություն առկա չէր:

Այս ամենն ապացուցում է, որ Սամվել Կարապետյանի դեպքում որեւէ ձեւով՝ դատարաններում իրավունքը չի գործում, իրավական փաստարկները չեն գնահատվում, արդարադատություն չի իրականացվում: Սամվել Կարապետյանի դեպքում բացառապես գործում է քաղաքական հետապնդումը, վրեժխնդրությունը, իրավունքի եւ օրենքի «վճռական» ոչնչացումը:

Հետագա զարգացումների վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԻՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԻ

Ինչ-որ պահի Հայաստանը ստիպված կլինի ընտրություն կատարել Եվրամիության եւ ԵԱՏՄ-ի միջեւ, անհնար է միաժամանակ մնալ այդ երկու միավորումներում, հայտարարել է ՌԴ փոխվարչապետ Ալեքսեյ Օվերչուկը:

«Ինչ վերաբերում է Եվրոպական Միության հետ Հայաստանի մերձեցմանը, մենք բազմիցս այդ մասին խոսել ենք եւ կարծում ենք, որ անդամակցությունը երկու ինտեգրացիոն միավորումներում միաժամանակ անհամատեղելի է: Ինչ-որ փուլում Հայաստանի ժողովուրդը պետք է համապատասխան ընտրություն կատարի», - հայտարարել է փոխվարչապետը:

ԻՐԱՎԻՃԱԿ

«ՈՍԿԵ ՔԱՐՏԵՐ»

ԱՄՆ-ն գործարկել է «Ոսկե քարտեր» տրամադրելու նախագիծն այն օտարերկրացիների համար, որոնք ցանկանում են ապրել ԱՄՆ-ում եւ հետագայում քաղաքացիություն ստանալ:

Այդ մասին հայտարարել է ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփը:

«Անձամբ ինձ համար եւ երկրի համար սա շատ կարեւոր իրադարձություն է. մենք գործարկում ենք «Թրամփի ոսկե քարտը»», ասել է Թրամփը գործարարների հետ հանդիպման ժամանակ:

ԱՄՆ-ի ղեկավարի խոսքով՝ քարտերը կարելի է ձեռք բերել մասնագիտացված կայքում:

«Ստացված բոլոր եկամուտները կուղղվեն ԱՄՆ-ի կառավարությանը, եւ դա կարող է հսկայական գումարներ բերել», - նշել է ԱՄՆ-ի նախագահը:

Թրամփն ավելի վաղ հայտարարել էր, որ ԱՄՆ-ն այսպես կոչված «ոսկե քարտեր» կվաճառի, որոնք օտարերկրացիներին երկրում ապրելու ու աշխատելու իրավունք կտան:

«Դա նման է գրին-քարտի, բայց ավելի լավ ու ավելի առաջադեմ է», - հավելել է Թրամփը:

Նա ավելի վաղ հույս էր հայտնել ԱՄՆ-ի պետական պարտքը կրճատել նման քարտեր վաճառելու շնորհիվ: Թրամփը կարծում է, որ «ոսկե քարտերի» շնորհիվ, որոնք հնարավորություն կտան ապրել Միացյալ Նահանգներում եւ հետագայում ամերիկյան քաղաքացիություն ստանալ, կհաջողվի երկիր ներգրավել աշխատասեր մարդկանց, որոնք աշխատատեղեր կստեղծեն:

«Ոսկե քարտը» հնարավոր է ձեռք բերել 1 միլիոն դոլարով:

ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Համլետ Հարությունյանը նշանակվել է արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար: Այդ մասին տեղեկանում ենք արդարադատության նախարարությունից:

Համլետ Հարությունյանի կենսագրական տվյալները.

22.09.2025-10.12.2025 - ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող,

11.07.2022-10.09.2025 - ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազ, առաջին դասի խորհրդական,

25.11.2021-01.07.2022 - ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում եւ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության գլխավոր մասնագետ,

01.02.2020-25.11.2021 - ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում եւ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ,

18.09.2018-01.02.2020 - ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում եւ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետ:

39 ՄԼՆ ԵՎՐՈՅԻ ՆՈՐ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Կառավարության դեկտեմբերի 11-ի նիստում հավանություն տրվեց որոշմանը, ըստ որի՝ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) 39 մլն եվրո վարկ կհատկացնի Երեւանում լոգիստիկ կենտրոնի կառուցման նպատակով:

Որոշման հիմնավորման մեջ ընդգծվում է, որ Հայաստանի եւ ՎԶԵԲ-ի միջեւ վարկային համաձայնագիրը կնքվել է 2025 թ. սեպտեմբերի 19-ին: Այն նախատեսում է Երեւանում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքսային եւ լոգիստիկ կենտրոնի կառուցում:

Բացի այդ, նախատեսվում է Հայաստանին տրամադրել նաեւ որոշակի գումար՝ ծրագրի իրականացման տեխնիկական աջակցությունն ապահովելու համար, որը կհատկացվի որպես դրամաշնորհ:

Կառավարության համաֆինանսավորման չափը կկազմի 9 մլն եվրո, որոնցից 7.8 մլն եվրոն վարկային միջոցներ են:

Ըստ հիմնավորման՝ վարկային միջոցներն ուղղվելու են Երեւանի արտաքին տնտեսական գործունեության (ԱՏԳ) կենտրոնի շինարարական աշխատանքներին, ապրանքների ու ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաեւ խորհրդատվական ծառայությունների ապահովմանը: Դրամաշնորհային միջոցները կուղղվեն շենքի շինարարությանը եւ անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերմանը:

ՊԵԿ-ը հայտնում է, որ ԱՏԳ կենտրոններում ապրանքների ներմուծման եւ արտահանման ողջ գործընթացը կկատարվի մեկ վայրում: Գործընթացները հիմնված կլինեն էլեկտրոնային համակարգերի եւ ծրագրային լուծումների վրա:

Նման կենտրոններում միատեղ պետք է գործեն բոլոր պետական մարմինները եւ մասնավոր կառույցները, որոնք ներմուծման ու արտահանման համար տրամադրում են պահանջվող փաստաթղթերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՆԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՆՎԵՐԸ՝ Գ. ՊԱՊՈՅԱՆԻՆ

Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը երկօրյա պաշտոնական այցով օգոստոսի 19-21-ը ժամանել էր Հայաստան: Պաշտոնական մի շարք հանդիպումների ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հանդիպել էր ԻԻՀ արդյունաբերության, հանքերի եւ առեւտրի նախարար Սեյյեդ Մոհամմադ Աթաբաքի գլխավորած պատվիրակությանը:

Պապոյանն այն պաշտոնյաներից է, որ ոչ միշտ է թանկարժեք նվերներ ստանում պաշտոնական հանդիպումներից կամ այցերից հետո:

Այս այցից հետո Գեւորգ Պապոյանը նվեր է ստացել պարսկական գորգ 151 հազար 600 դրամ արժեքով: Հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել Իրանի նախագահի հետ, որից հետո Պապոյանը ստացել է 207 հազար դրամ արժեցող «Գելիմ Սոֆրեհ Կորդի»-ն հարթ հյուսված գոբելենային գորգ, որը ավանդաբար հյուսվում է Հյուսիսային եւ Ռազավ Խորասանի քուրդ կանանց կողմից:

Պապոյանը Իրանի առեւտրային պալատից ստացել է նաեւ պարսկական ձեռագործ «Սինաքարի» ոճի ծաղկամանի եւ ափսեի հավաքածու, որն արժեցել է 94 հազար 100 դրամ:

Է. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՈՒՄ՝ ՄՈՍԿՎԱՅԻ ՎՐԱ

Դեկտեմբերի 11-ի գիշերը ուկրաինական անօդաչու սարքերը զանգվածային հարձակում են սկսել Մոսկվայի վրա, հայտարարել է Մոսկվայի քաղաքապետ Սերգեյ Սոբյանինը: Նա հայտնել է, որ յոթ ժամից ավելի ժամանակահատվածում քաղաքին մոտենալիս ոչնչացվել է 36 անօդաչու սարք: Սոբյանինը նշել է, որ դեպքի վայրում աշխատում են արտակարգ ծառայություններ: Սակայն նա չի մանրամասնել, թե արդյոք հարձակման հետեւանքով կա՞ն զոհեր կամ վնասվե՞լ են ցամաքային կառույցները:

Անօդաչու սարքերի հարվածի ժամանակ Ռոսավիացիան (Դաշնային օդային տրանսպորտի գործակալությունը) հայտարարել է Մոսկվայի բոլոր օդանավակայաններում ինքնաթիռների վայրէջքի եւ մեկնման սահմանափակումների մասին: Հետաձգվել է գրեթե 200 չվերթ: Մասնավորապես, «Շերեմետեւո» օդանավակայանում հետաձգվել է Շենժեն, Եկատերինբուրգ, Ուֆա, Մինսկ, Ստամբուլ, Չելյաբինսկ, Օմսկ եւ այլ քաղաքներ 53 չվերթ:

Եվս 55 չվերթ չեղարկվել է: «Վնուկովոյում» կեսգիշերից հետաձգվել է 54 չվերթ, այդ թվում՝ Դուբայ, Շարմ էլ Շեյխ, Երեւան, Աստանա, Թբիլիսի եւ Եկատերինբուրգ չվերթերը:

Չեղարկվել է նաեւ ինը չվերթ՝ Ստամբուլ, Երեւան, Սանկտ Պետերբուրգ եւ այլ քաղաքներ: «Դոմոդեդովոյում» գիշերը հետաձգվել է Հուրգադա, Բաքու, Ուֆա, Միներալնիե Վոդի եւ այլ քաղաքներ 17 չվերթ: Չվերթերի ուշացման պատճառով Մոսկվայի օդանավակայաններում ուղեւորները ստիպված են եղել քնել ճամբարային գորգերի, ստվարաթղթի եւ նստարանների վրա, հաղորդում է Shot-ը:

Հիշեցնենք, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ինքնաթիռը նույնպես չէր կարողացել վայրէջք կատարել Մոսկվայի օդանավակայանում, փոխարենը վայրէջք էր կատարել Սանկտ-Պետերբուրգում:

ՀՈՒՆԱՍՏԱՆ–ՀՀ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբերի 10-ին ՀՀ ԱԳ նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Կարապետյանը հանդիպում է ունեցել Հունաստանի դիվանագիտական ակադեմիայի տնօրեն Միքաիլ Դիամեսիսի հետ: Այս մասին հայտնել են ՀՀ ԱԳՆ-ից:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի դիվանագիտական դպրոցի եւ Հունաստանի դիվանագիտական ակադեմիայի միջեւ համագործակցության հեռանկարները: Կողմերն ընդգծել են փոխադարձ պատրաստակամությունը խթանելու երկու դիվանագիտական կրթական կառույցների միջեւ փորձի եւ մասնագիտական գիտելիքների փոխանակումը՝ համատեղ նախաձեռնությունների ու ուսումնական ծրագրերի միջոցով:

Դավիթ Կարապետյանը զրուցակցին է ներկայացրել նաեւ «Երեւանյան երկխոսություն» համաժողովի կարեւորությունը եւ այս համատեքստում հետագա փոխգործակցության հնարավորությունները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔՈՒՄ

ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵ՞Ր ԿԼԻՆԵՆ

Երեկ՝ դեկտեմբերի 11-ին, Քննչական կոմիտեն խուզարկություն է իրականացրել Արցախի ներկայացուցչությունում: Այդ մասին հայտնում են «Պասիվ ունեմ» խմբակցության ղեկավար Տիգրան Աբրահամյանը եւ Արցախի խորհրդարանի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Մեսրոպ Հակոբյանը:

«Արցախի ներկայացուցչությունում, արցախցիների վերադարձին վերաբերող խորհրդարանական լսումներից մեկ օր անց, Քննչական կոմիտեն ներկայացուցչությունում խուզարկություններ է իրականացնում»,- նշել է Աբրահամյանը:

Քննչական կոմիտեն հաստատում է այս տեղեկությունը՝ ընդգծելով, որ քրեական վարույթի շրջանակում կատարվում են անհրաժեշտ քննչական գործողություններ:

Armlur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Քննչական կոմիտեն Արցախի Հանրապետության ներկայացուցչության շենքը խուզարկելուց հետո պատրաստվում է նաեւ ձերբակալությունների: Ըստ նույն աղբյուրների՝ չի բացառվում, որ ձերբակալվեն Արցախի պաշտոնյաներ: Խուզարկության ընթացքում առգրավվել է մեկ համակարգիչ: Փրկարար ծառայության աշխատակիցները բացել են գանձապահարանը (սեյֆը), որի մեջ հայտնաբերվել է Արցախում տպագրված թերթից մեկ օրինակ:

Հիշեցնենք, որ «Քրեական վարույթը, որի շրջանակներում իրականացվում է խուզարկության գործողությունը, նախաձեռնվել է 2025 թվականի հունիսին եւ կապված է ենթադրյալ տնտեսական հանցագործության հետ», - նշել է փաստաբան Ռոման Երիցյանը՝ հավելելով, որ «խոսքը վերաբերում է կոնկրետ իրավաբանական անձի եւ Հայաստանում գործող բանկի միջեւ կնքված վարկային պայմանագրի շրջանակում Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից ցեսիայի պայմանագիր կնքելուն»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ՝ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

Դեկտեմբերի 6-ին գողության դեպք է տեղի ունեցել Լոռու մարզում: Ժամը 23:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Լոռու մարզային քրեական վարչությունում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոցի 19 շենքի բնակարաններից մեկից գողացել են ոսկեղեն եւ գումար:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, Լոռու մարզային վարչության օպերատիվ խումբը մեկնել է դեպքի վայր, որտեղ նշված տան բնակիչ 61-ամյա Սենիկ Ա.ն հայտնել է, որ դեկտեմբերի 6-ին՝ ժամը 17:00-ից մինչեւ 23:00-ն ընկած ժամանակահատվածում, 1-ին հարկի պատուհանը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացելու միջոցով մուտք են գործել բնակարան եւ ննջասենյակի պահարանից գողացել են 4 հազար ԱՄՆ դոլար եւ 1 մլն 100 հազար դրամ գումար:

Լոռու մարզային քրեական վարչության ծառայողների կողմից ձեռնարկվում են միջոցառումներ՝ հանցագործությունը բացահայտելու եւ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

Դեպքի փաստով կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչություն:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ

Երեկ՝ դեկտեմբերի 11-ին, ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ «Հրազդան» ստադիոնի հարրեւանությամբ գտնվող Հրազդանի կիրճի մոտ եղած փոքր կամրջի տակ դի կա:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ժամանել են Երեւանի թիվ 1 հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Դեպքի վայր են ժամանել նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության կենտրոնականի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Երվանդ Նիկոյանի գլխավորությամբ:

Դեպքի մասին ոստիկանության Կենտրոնական բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական 2-րդ բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ հատկապես կարեւոր գործերով ավագ քննիչ Կարեն Խաչատրյանի գլխավորությամբ:

Փրկարարները մեծ դժվարությամբ դին մոտ 500 մետր, ոտքով մոտեցրել են անվտանգ վայր:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել:

Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են մահացածի ինքնությունը, ով կլինի մոտ 55-60 տարեկան տղամարդ:

128 ԿԳ ՍԻԳ

Դեկտեմբերի 9-ին՝ ժամը 11:45-ի սահմաններում, Սեւան-Մարտունի-Գետափ ճանապարհի 11-րդ կիլոմետրին ջրային պարեկները ստուգման նպատակով կանգնեցրել են Նորատուս գյուղի մի բնակչի վարած «Օպել» մակնիշի ավտոմեքենան:

Մեքենայի բեռնախցիկում եւ սրահում կային սիգ եւ իշխան տեսակի ձկներ:

Պարզաբանումների համար տղամարդը մեքենայով հանդերձ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Գավառի բաժին:

Նույն օրը՝ ժամը 12:20-ի սահմաններում, նույն ճանապարհի 50-րդ կիլոմետրին ջրային պարեկները մոտեցել են կայանված «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի: Նորատուսցի վարորդը բեռնախցիկից ներկայացրել է 46 կգ ընդհանուր քաշով 128 սիգ:

Տղամարդը մեքենայով հանդերձ ներկայացվել է Համայքնային ոստիկանության Մարտունու բաժին:

Երկու դեպքով էլ հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԴԱՀՈՒԿՆԵՐԻ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԿԱՏԱՐՎԵԼ

Համայնքային ոստիկանության Աշոցքի բաժին հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ դեկտեմբերի 10-ին՝ ժամը 16:35-ի սահմաններում, Երեւան-Գյումրի-Բավրա ճանապարհի 149-րդ կմ հատվածից գողացել են Գյումրու ձմեռային մարզաձեւերի մանկապատանեկան մարզադպրոցին պատկանող 10-15 զույգ դահուկները:

Աշոցքի բաժնի համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ գողությունը կատարել են 62-ամյա տղամարդն ու նրա 37-ամյա որդին: Նրանք Աշոցքի հասցեներից մեկի մոտ հայտնաբերվել եւ «Նիսան» մակնիշի մեքենայով հանդերձ՝ տեղափոխվել են բաժին, որտեղ հայտնել են, որ գողացված դահուկները գտնվում են «Նիսանի» բեռնախցիկում:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Շիրակի մարզային քննչական վարչություն:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑ

Դեկտեմբերի 4-ին Համայնքային ոստիկանության Եղեգնաձորի բաժնում ստացվել էր օպերատիվ տեղեկություն, որ Շատին գյուղի բնակիչ 50-ամյա մի տղամարդ Շատին-Եղեգիս ճանապարհին գտնվող իրեն պատկանող շինությունում եւ իր կողմից օգտագործվող տնակում ապօրինի պահում է կանեփից պատրաստված թմրամիջոց:

Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվեց քրեական վարույթ: Հաջորդ օրը դատարանի որոշման հիման վրա կատարված խուզարկությամբ տնակում հայտնաբերվել է 7,62 մմ տրամաչափի 51 փամփուշտ, իսկ Շատին-Եղեգիս գյուղամիջյան ճանապարհի շինությունում՝ լիցքավորված թմբուկավոր ատրճանակ, 41 փամփուշտ եւ կանեփի սերմեր:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

Մեկ այլ դեպքով, համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Սարդարապատ գյուղի 51-ամյա բնակիչը տանը թմրամիջոց է պահում: Նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կատարված զննությամբ 51-ամյա սարդարապատցու ավտոտնակում հայտնաբերվել են թմրամիջոցի նմանվող՝ ընդհանուր 6,43 գրամ զանգվածով փաթեթներ:

Պարզվել է նաեւ, որ նա թմրամիջոցը պատրաստել էր տնամերձ հողամասում աճեցրած կանեփից:

51-ամյա տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 10-ից 11-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՎՈՒՇԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԸ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ

Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանին մեր թղթակիցը դիմել է տեղեկատվական հարցմամբ՝ հետաքրքրվելով. «Տավուշի մարզում գործում է 25 աղբավայր: Դրանցից քանի՞սն են համապատասխանում բնապահպանական օրենսդրության պահանջներին, եւ յուրաքանչյուրում ինչպիսի՞ խախտումներ են առկա:

Մասնավորապես՝ Դիլիջանի համայնքային աղբավայրը չունի ցանկապատ, տարածքում անարգել արածում են կովեր, որոնք սնվում են տարբեր քիմիական նյութերով: Աղբավայրը հաճախ է բռնկվում, ինչը վնասում է բնությունը:

Խնդրում եմ հայտնել՝ Ձեր ղեկավարած տեսչությունը վերջին անգամ ե՞րբ է ուսումնասիրել Դիլիջանի աղբավայրի վիճակը եւ ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել»:

Դեկտեմբերի 2-ին ստացել ենք պատասխան տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Վ. Գալոյանի ստորագրությամբ, որտեղ նշվում է հետեւյալը.

«Տավուշի մարզում հաշվառված 25 աղբավայրից գործում են 18-ը՝ ըստ համայնքների՝

- Իջեւան՝ 7,
- Դիլիջան՝ 1,
- Նոյեմբերյան՝ 4,
- Բերդ՝ 6:

2025 թվականի 4-րդ եռամսյակում «Նոյեմբերյան համայնքի համայնքային տնտեսություն սպասարկող» ՀՈԱԿ-ում նախատեսվում է պլանային ստուգում (4 աղբավայր): Մյուս աղբավայրերի համապատասխանությունը՝ ինչպես ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի 4-ի N27-Ն որոշմամբ սահմանված նվազագույն նորմերին, այնպես էլ բնապահպանական օրենսդրությանը, կստուգվի հաջորդ տարիների վերահսկողական միջոցառումների ընթացքում:

Դիլիջանի աղբավայրը սպասարկող «Դիլիջանի համայնքի կոմունալ սպասարկում եւ լուսավորություն» ՀՈԱԿ-ում վերջին ստուգումը իրականացվել է 2021 թվականին, որի արդյունքում կիրառվել են վարչական պատասխանատվության միջոցներ: Վերջին ամիսներին Դիլիջանի աղբավայրում գրանցված 7 հրդեհներից 2-ի վերաբերյալ նյութերը ուղարկվել են ՆԳՆ ոստիկանության Դիլիջանի բաժին, իսկ 5-ը՝ Տավուշի մարզպետարան՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու համար:

Փաստորեն, Դիլիջանի աղբավայրում վերջին ամիսներին բռնկված 7 հրդեհի պայմաններում տեսչական մարմինը վերջին անգամ ստուգում է իրականացրել դեռեւս 2021-ին: Հաշվի առնելով աղբավայրերի տեւական անբավարար վիճակը եւ կրկնվող հրդեհները՝ տեսչական մարմինը պետք է գործի ավելի արագ ու հետեւողական՝ ապահովելով աղբավայրերի պատշաճ վերահսկում եւ բնության պահպանություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԳԻՍՏԸ՝ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

ԻՆՉ ԱՐԺԵՆ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐՆ ՈՒ ՀՅՈՒՐԱՏՆԵՐԸ

Ամանորը Հայաստանում նշվում է տարբեր ձեւերով: Շատերը նախընտրում են այն դիմավորել տանը՝ ընտանիքի հետ, իսկ մյուսները տոնական օրերը անցկացնում են հյուրանոցներում, հանգստյան տներում կամ վիլլաներում՝ հատկապես մայրաքաղաքից հեռու:



ArmLur.am-ը ուսումնասիրել է Booking.com-ի առաջարկները եւ ներկայացնում է, թե ինչ արժեքներով կարելի է ամրագրել հյուրանոցային համարներ ու հյուրատներ Դիլիջանում դեկտեմբերի 30-ից հունվարի 2-ը:

White House Villa Դիլիջան

Դիլիջանում գտնվող այս վիլլայում 3 գիշերվա հանգիստը արժե 1 միլիոն 530 հազար դրամ: Վիլլան համալրված է բացօթյա լողավազանով, գեղեցիկ տեսարանով, ինչպես նաեւ անվճար ինտերնետով: Հասանելի են սաունա եւ ջակուզի: Կա մասնավոր կայանատեղի:

Վիլլան ունի կահավորված խոհանոց, անձնական լոգարան, հողահարթակ (տեռաս)՝ լեռնային տեսարանով, հեռուստացույց: Սրբիչներն ու անկողնային պարագաները տրամադրվում են հավելյալ վճարով:

Dilijan Villas Rest & Relax

Այստեղ 3 գիշերվա արժեքը կազմում է 1 միլիոն 214 հազար դրամ: Յուրաքանչյուր վիլլա հագեցած է ջեռոցով, միկրոալիքային վառարանով, սուրճի մեքենայով, որոշներն էլ՝ ամբողջությամբ կահավորված խոհանոցով: Առաջարկվում է մայրցամաքային կամ անգլիական նախաճաշ:

Ամենամատչելի հյուրատները սկսվում են 44 հազար դրամից՝ 3 գիշեր:

Hostel La Casa Dilijan

3 գիշերվա արժեքը՝ 45 հազար դրամ: Ունի ընդհանուր հյուրասենյակ եւ անվճար ինտերնետ: Որոշ համարներից բացվում է քաղաքի տեսարան:

Դիլիջանում ամանորյա հանգստի ամեն մատչելի լուծումը անհատական տների կամ քոթեջների վարձակալությունն է, որի արժեքը սկսվում է 45 հազար դրամից: Գոյություն ունեն նաեւ հյուրատներ, որտեղ դեկտեմբերի 30-հունվարի 2-ի բնակեցման արժեքը կազմում է 100-130 հազար դրամ:

Green Dilijan B&B

Առաջարկում է 3 գիշերվա հանգիստ ընդամենը 44 հազար դրամով: Հյուրատունն ունի այգի, ընդհանուր օգտագործման հյուրասենյակ, հողահարթակ (տեռաս) անվճար ինտերնետով եւ կայանատեղիով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԵՐԿԱՐԱՁԳՎԵՆ

Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը տեղեկացնում է, որ ժամանակավոր պաշտպանության (փախստականի) վկայականները փոխարինելու անհրաժեշտություն չկա:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 17-ի 1649-Ն որոշման համաձայն՝ 2024 թվականին փոխարինված ԺՊ վկայականների վավերականության ժամկետը կերկարաձգվի ավտոմատ կերպով՝ Կառավարության համապատասխան նոր որոշման ընդունումից անմիջապես հետո:

Մուտքի ուղղությամբ սահմանը հատելիս ԺՊ վկայականի առկայությունը պարտադիր չէ:

«Եթե ԺՊ վկայականը ստանալուց հետո անձնագիրը փոխվել է (կորուստ, ժամկետի ավարտ, վնասում), ապա անհրաժեշտ է ներկայացնել դիմում՝ նոր տվյալներով վկայական ստանալու, քանի որ ԺՊ վկայականը տրվում է միայն գործող անձնագրի հիման վրա:

Սահմանահատումից առաջ կարող եք ստուգել ձեր քարտի QR կոդը, որը ցույց է տալիս վկայականի վավերականության ժամկետը: Սակայն եթե մինչեւ այս տարվա վերջ փորձեք QR-ով ստուգել, երկարաձգված ժամկետը չի երեւա, քանի որ համակարգը կթարմացվի միայն Կառավարության նոր որոշման ընդունումից հետո»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԿԻԵՎԻՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատն ընդունել է երկրի՝ 2026 թվականի պաշտպանության բյուջեի օրինագիծը:

Այդ մասին հաղորդել է The Hill թերթը:

Հրապարակման տվյալներով, օրինագիծը հաստատվել է 312 ձայնով, դեմ է քվեարկել 112 օրենսդիր:

Փաստաթուղթը կուղարկվի Սենատ, որտեղ, ըստ ԶԼՄ-ների, քվեարկությունը սպասվում է հաջորդ շաբաթ: Օրինագծի համաձայն՝ 2026 թ. պաշտպանության բյուջեն կկազմի 901 միլիարդ դոլար. այն նախատեսում է 400 միլիոն դոլարի չափով ռազմական օգնություն Կիեւին:

Բացի այդ, պետք է բարձրացվեն զինծառայողների աշխատավարձերը, սահմանափակվեն ԱՄՆ-ի ներդրումները Չինաստանում, ինչպես նաեւ ամբողջությամբ վերացվեն Սիրիայի դեմ պատժամիջոցները:

Ներկայացուցիչների պալատի կողմից հաստատված փաստաթուղթը նախատեսում է Եվրոպայում առնվազն 76 հազար ամերիկացի զինծառայող պահել՝ հիմնական մարտական տեխնիկայի հետ միասին:

Բացի այդ, դրույթ է նախատեսված Հարավային Կորեայում ամերիկյան զորքեր պահելու մասին, որի համաձայն զորքերի նվազագույն թվաքանակը պետք է լինի 28,5 հազարի մակարդակում:

Ի թիվս այլ դրույթների, օրինագիծը նախատեսում է 38 միլիարդ դոլարի հատկացում ավիացիոն տեխնիկայի արտադրության ու ձեռքբերման համար, 34 միլիարդ դոլար՝ միջուկային ծրագրերի համար, 26 միլիարդ դոլար՝ նավաշինության եւ 25 միլիարդ դոլար՝ զինամթերքի արտադրության համար:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար, 1 մարդ մահացել է, 19-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

Իսրայելի արտաքին գործերի նախարար Գիդեոն Սաարը հայտարարել է, որ Վաշինգտոնում պետքարտուղար Մարկո Ռուբիոյի հետ հանդիպման ժամանակ քննարկել է Մերձավոր Արեւելքում ստեղծված իրավիճակը:

Այս մասին Սաարը նշել է X միկրոբլոգի գրառման մեջ:

«Մենք արդյունավետ քննարկում ունեցանք Մերձավոր Արեւելքում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում եւ դրանից դուրս մեր փոխադարձ հնարավորությունների եւ մարտահրավերների շուրջ», - գրել է Սաարը գրառման մեջ:

«Մեր անխզելի դաշինքը երբեք այսքան ուժեղ չի եղել»,- նշել է նա:

Իր հերթին ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն X-ի գրառման մեջ նշել է, որ Գիդեոն Սաարի հետ քննարկել են տարածաշրջանային անվտանգության եւ մարդասիրական ջանքերի վերաբերյալ հարցեր:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՑԱՆՑԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻՑ

«Ակբա» բանկի կիբեռանվտանգության թիմը ArmSec 2025-ի շրջանակում ներկայացրել է ցանցային սպառնալիքներից եւ զեղծարարություններից թվային միջավայրը պաշտպանելու իր լուծումները:

«Ակբա» բանկի առաջարկած լուծումների շնորհիվ հնարավոր է մի քանի անգամ բարձրացնել մոբայլ հավելվածների անվտանգության մակարդակը՝ պաշտպանելով դրանք նույնիսկ ամենատարածված կիբեռհանցագործություններից:

«Շատ տարածված է զեղծարարության այն տեսակը, որով զեղծարարները զանգում են հաճախորդին, ներկայանում օպերատորի անունից եւ վնասակիր ֆայլ ուղարկում: Տվյալ լուծումը, որը ներկայացնում է «Ակբա» բանկը, կարողանում է ավտոմատ կերպով հայտնաբերել եւ կանխարգելել տվյալ ֆայլը, ինչպես նաեւ կանխել հետագա ֆինանսական զեղծարարություններն ու կորուստները», - նշել է «Ակբա» բանկի կիբեռանվտանգության հարձակողական թիմ լիդեր Տիգրան Ավանեսյանը:

«Այստեղ մեր նպատակն է ներկայացնել այն մեթոդները, որոնք կօգնեն այլ կազմակերպություններին եւս կանխարգելել այն հարձակումները, որոնք տեղի են ունենում մատակարարների շղթաների միջոցով: Մեր գործընկերները կարող են վստահ լինել, որ նրանք պաշտպանված են: Մեր տեխնիկական հագեցվածությունը թույլ է տալիս, որպեսզի մենք կարողանանք դիմագրավել ժամանակակից թվային հարձակումներին եւ մարտահրավերներին»,- նշել է «Ակբա» բանկի կիբեռպատահարների հակազդման եւ կանխարգելման թիմ լիդեր Լեւոն Իսաջանյանը:

«Արհեստական բանականությունը համակարգի համար շատ խնդիրներ է առաջացնում. հիմա արհեստական բանականությունը կարողանում է շատ լավ ծրագրեր գրել, որոնք վնասում են համակարգը: Մեր թիմը մշտապես հետեւում է տեխնոլոգիայի աճին ու զուգահեռ զարգացնում իր պաշտպանության մեթոդները»,- նշել է «Ակբա» բանկի կիբեռանվտանգության պաշտպանողական թիմի մասնագետ Արտյոմ Արսենյանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ Best Western Hotels-Ի ՀԵՏ

Best Western Hotels միջազգային հյուրանոցային ցանցը եւ New City Projects ընկերությունը ստորագրեցին համագործակցության պայմանագիր՝ Ծաղկաձորի ստում կառուցվող պրեմիում դասի Pallada համալիրի կառավարման եւ հանրությանը ներկայացման ուղղությամբ:

Բարձր սպասարկման ստանդարտներ սահմանելը եւ ապահովելը շուտով իրականություն կդառնա Հայաստանում նոր կոնցեպտ առաջարկող Pallada բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրում:

Ծաղկաձորի կենտրոնական Ծաղկունյաց հրապարակի անմիջապես հարեւանությամբ կառուցվող Pallada-ն տարածաշրջանում իր տեսակի մեջ եզակի նախագիծ է՝ միավորելով ամենօրյա կյանքի հարմարավետությունը, հանգիստն ու առողջարար միջավայրը, սպորտն ու ժամանցը եւ ներկայացնելով լեռնային հանգստի նոր մշակույթ: Համալիրը բաղկացած է լինելու 8 մասնաշենքից, որտեղ յուրաքանչյուր բնակարան համատեղում է անհրաժեշտ ֆունկցիոնալությունն ու հյուրանոցային սենյակին բնորոշ սպասարկման ստանդարտները: Այս ուղղությամբ մեծ ազդեցություն կհաղորդի հատկապես Best Western Hotels հեղինակավոր հյուրանոցային ցանցի հետ համագործակցությունը:

Նախագիծը նախատեսված է ամբողջ տարվա ընթացքում լիարժեք հանգստի, ակտիվ ժամանցի եւ առողջարար կյանքի հնարավորություններ ապահովելու համար՝ դարձնելով այն ինչպես զբոսաշրջիկների, այնպես էլ ներդրողների համար գրավիչ ուղղություն: Այն յուրահատուկ բնակելի համալիր է, որը կատարյալ ընտրություն է թե՛ մշտական բնակության, թե՛ հանգստի համար:

Համալիրում նախատեսված 137 բնակարանը կգործեն որպես Best Western Premier, իսկ 43 բնակարանը՝ որպես Best Western apartments: Մնացած 600-ից ավելի բնակարանները կգործեն որպես Best Western Residences բնակելի հատված՝ կառավարման եւ սպասարկման գործառույթներով, որոնք վստահվելու են փորձառու կառավարչական ընկերության:

Համագործակցության պայմանագիրը կստորագրվել է ս.թ. դեկտեմբերի 10-ին Հայաստան ժամանող Best Western Hotels ցանցի տարածաշրջանային պաշտոնական ներկայացուցչի եւ New City Projects ընկերության գործադիր տնօրենի միջեւ:

Պայմանագրի ստորագրումն ընդգծում է Best Western Hotels-ի հետաքրքրվածությունը Հայաստանի զբոսաշրջության զարգացմամբ, ինչպես նաեւ New City Projects-ի շարունակական հանձնառությունը՝ բարձրակարգ, միջազգային չափանիշներով նախագծեր իրականացնելու գործում:

New City Projects-ի համար Pallada-ն ոչ միայն կառուցապատման հերթական ծրագիր է, այլ կարեւոր ներդրումային նախաձեռնություն, որը նպատակ ունի բարձրացնել Ծաղկաձորի զբոսաշրջային գրավչությունը, առաջարկել նոր որակ ու նոր միջավայր ամբողջ տարածաշրջանի համար:

Best Western Hotels-ի հետ համագործակցությունը կերաշխավորի միջազգային ստանդարտներին համապատասխան սպասարկում, շարունակական որակի վերահսկում եւ համալիրի հետագա կայուն զարգացում:

ԲԱՆԿԱՅԻՆ

ԱԿՆՔԱՐՏՈՎ ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՈՄՍԸ ԱՆՎՃԱՐ ԿԼԻՆԻ

«Ֆասթ» բանկի հաճախորդները Սինեմա Սթար (Cinema Star) կինոթատրոններում Visa ԱկնՔարտով տոմս գնելու դեպքում նույն ցուցադրության երկրորդ տոմսը կստանան անվճար: Առաջարկը գործում է միայն Դալմա եւ Ռիո մոլերի կինոթատրոններում ցանկացած հրապարակային ցուցադրության ֆիլմի կամ մուլտֆիլմի համար:

Երկրորդ անվճար տոմս ձեռք բերելու համար անհրաժեշտ է մոտենալ կինոթատրոնի դրամարկղ եւ տեղում վճարում կատարել «Ֆասթ» բանկի Visa ԱկնՔարտով: Առաջարկը գործում է սույն թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ: Հավելենք նաեւ, որ առաջարկը չի սահմանափակվում միայն մեկ տոմսով, երկու տոմս ձեռք բերելու դեպքում քարտապանները կստանան եւս երկու անվճար տոմս, եւ այդպես շարունակ:

Եվս մեկ անգամ հիշեցնենք, որ առաջարկը չի գործում առցանց գնման, կանխիկ վճարման կամ այլ միջոցներով վճարման դեպքում:

«Ֆասթ» բանկի Visa ԱկնՔարտ ձեռք բերելու համար անհրաժեշտ է մոտենալ բանկի 24/7 աշխատանքային գրաֆիկով աշխատող որեւէ մասնաճյուղ, կամ պատվիրել քարտը բանկի մոբայլ հավելվածով: ԱկնՔարտերն առաքվում են հաճախորդի նախընտրելի հասցեով:

«Ֆասթ» բանկը ներկայացնում է քարտերի լայն տեսականի, որոնց հատուկ առաջարկներին ծանոթանալու համար անհրաժեշտ է մուտք գործել բանկի կայքէջ:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՆՈՐ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Հաշվի առնելով ներդրողների մեծ հետաքրքրությունն ու առաջին թողարկումների հաջող տեղաբաշխումը՝ «Յունիբանկը» հայտարարում է ՀՀ դրամով անժամկետ պարտատոմսերի նոր թողարկման մասին: Անժամկետ պարտատոմսերի նոր թողարկման ծավալը կազմում է 3 միլիարդ ՀՀ դրամ, իսկ արժեկտրոնային տարեկան տոկոսադրույքը՝ 13.75%:

Օրեր առաջ «Յունիբանկը» հաջողությամբ տեղաբաշխել էր առաջին անժամկետ պարտատոմսերը Հայաստանի ֆինանսական շուկայում՝ 3.5 միլիարդ ՀՀ դրամ եւ 9 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով: Այդ թողարկումների տեղաբաշխումն ավարտվել էր նախատեսված ժամկետից զգալիորեն ավելի շուտ՝ գրեթե մեկ օրվա ընթացքում: Ուստի բանկը հաճախորդների պահանջարկը բավարարելու համար ընդունեց պարտատոմսերի նոր թողարկում կատարելու որոշում:

Արժեկտրոնային եկամտի վճարումները կիրականացվեն եռամսյակային պարբերականությամբ: Պարտատոմսերի արժեկտրոնային եկամուտը կմնա անփոփոխ առաջին երեք տարիների ընթացքում, որից հետո այն կհաշվարկվի պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի 3 այս ժամկետայնության եկամտաբերությանը գումարելով 6.5%:

Այս նոր ներդրումային գործիքի թողարկումը նշանակալի իրադարձություն էր Հայաստանի արժեթղթերի շուկայի համար: Այն ներդրողներին հնարավորություն է տալիս երկարաժամկետ հեռանկարում կանոնավոր եկամուտ ստանալ: «Յունիբանկը» շարունակելու է հետեւողականորեն ամրապնդել իր դիրքերը կապիտալի շուկայում՝ առաջարկելով ժամանակակից ներդրումային գործիքներ եւ նպաստելով երկրի ֆինանսական ենթակառուցվածքների զարգացմանը:

Անժամկետ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը (գրանցված է ՀՀ ԿԲ կողմից 26.11.2025թ. 1/427Ա որոշմամբ) հրապարակված է բանկի կայքում՝ www.unibank.am

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՐԹԱԿԱՆ ՇՐՋԱՅՑԸ՝ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ներկայացուցիչները Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի եւ Պահպանության ծառայության մասնագետների հետ հերթական շրջայցն են կատարել Տավուշի մարզի մի շարք վերականգնվող հուշարձանների տարածքներում:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ այցելել են Սրվեղի վանք, Ոսկեպարի Սբ Աստվածածին եւ Կիրանցի Սբ Երրորդություն եկեղեցիներ, Մակարավանք:

Սրվեղի վանքը եւ Կիրանցի Սբ Երրորդություն եկեղեցին վերականգնվում են ԿԳՄՍ նախարարության միջոցներով: Կիրանցի Սբ Երրորդություն եկեղեցու վերականգնման աշխատանքները կավարտվեն մինչեւ տարեվերջ. ներկայում ընթացքի մեջ են տանիքի եւ զանգաշտարակի կառուցման աշխատանքները:

Սրվեղի վանքում շարունակվում են 19-րդ դարի Սբ Աստվածածին եւ 13-րդ դարի Սբ Նշան եկեղեցիները վերականգնման աշխատանքները: Աղյուսե պատերի վերականգնումն իրականացնում են Իրանի Իսլամական Հանրապետությունից հրավիրված վարպետները: Վերականգնման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2027 թվականին:

Ոսկեպարի Սբ Աստվածածին (7-րդ դար) եկեղեցին նորոգվում է ԿԳՄՍՆ Պահպանության ծառայության արտաբյուջեի միջոցներով. ընթացքի մեջ են տանիքների ծածկասալերի նորոգման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսված է տարեվերջին:

Մակարավանքում մասնագետները քննարկել են բարերարի միջոցներով գավիթի տանիքի նորոգման ընթացիկ աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է 2026 թվականին: Պատվիրատուն Իջեւանի գինու-կոնյակի գործարանն է:

Հիշեցնենք, որ նոյեմբեր ամսվա վերջին էլ ԿԳՄՍ նախարարության աշխատակիցներն աշխատանքային այց էին կատարել Արագածոտնի մարզ՝ Փարպիի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցի, Բյուրականի 10-րդ դարի Սբ Հովհաննես եկեղեցի, Ամբերդ ամրոցի համալիր, Ագարակի հնավայր՝ տեղում ծանոթանալու ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերականգնվող հուշարձանների ամրակայման եւ վերականգնման աշխատանքներին:

Մշտադիտարկմանը ներկա էին կապալառու, տեխնիկական եւ հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները: ԿԳՄՍ նախարարությունից հայտնել էին, որ Փարպիի Ծիրանավոր եկեղեցու տարածքում աշխատակիցները ծանոթացել են պատերի սրսկման, աստիճանների եւ տարածքի բարեկարգման աշխատանքներին՝կատարելով մի շարք դիտարկումներ:

Բյուրականի Սբ Հովհաննես եկեղեցու տարածքում նախարարության ներկայացուցիչները հետեւել էին հարավային շքամուտքի դետալների պատրաստման, Ագարակի հնավայրում՝ ծածկի նորոգման աշխատանքներին:

Ամբերդ ամրոցի տարածքում մասնագետները դիտարկել էին հուշարձանի վերականգնման լայնածավալ աշխատանքները, ծանոթացել նոր հայտնաբերված հնագիտական առարկաներին:

Ամբերդի հնագիտական պեղումների ընթացքում բացվել էին նոր շերտեր, մասնագետները քննարկում էին դրանց հետագա պահպանման հարցերն ու անվտանգության ապահովմամբ՝նոր շերտերի բացման հնարավորությունները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի բռնցքամարտի տղամարդկանց հավաքականի անդամ Արթուր Բազեյանը դարձավ IBA-ի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

ԱՄԷ-ի Դուբայ քաղաքում ընթացող IBA-ի կազմակերպած բռնցքամարտի աշխարհի առաջնության 60 կգ քաշային կարգի կիսաեզրափակիչում Արթուր Բազեյանը մրցեց ուզբեկ Աբումալիկ Խալուկովի հետ ու զիջեց 5:0 հաշվով:

Բազեյանը դարձավ IBA-ի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

Ավելի ուշ կիսաեզրափակիչում կմրցեն նաեւ Հովհաննես Բաչկովը, Ռաֆայել Հովհաննիսյանը, Դավիթ Չալոյանն ու Ռուդոլֆ Գարբոյանը:

IBA բռնցքամարտի աշխարհի առաջնությունն անցկացվում է ԱՄԷ-ի Դուբայ քաղաքում դեկտեմբերի 2-13-ը: Մրցաշարի մրցանակային ֆոնդը կազմում է 8 միլիոն դոլար: Առաջին տեղը զբաղեցրած բռնցքամարտիկները կստանան 300 հազար դոլար, երկրորդը՝ 150 հազար, երրորդը՝ 75 հազար եւ չորրորդը՝ 10 հազար դոլար, որից 50 տոկոսը կլինի բռնցքամարտիկինը, 25-ական տոկոսը մարզիչներինը ու ազգային ֆեդերացիաներինը: Միջազգային օլիմպիական կոմիտեի որոշմամբ Օլիմպիական խաղերի որակավորման մրցաշարերը չի անցկացնում IBA-ն:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Կանադական «Վանկուվերի» գերմանացի հարձակողական ոճի կիսապաշտպան Թոմաս Մյուլերը վերջնական ընտրություն է կատարել «Ինտեր Մայամիի» արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսիի եւ «Ալ-Նասրի» պորտուգալացի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի միջեւ: «Մեսսի՞, թե՞ Ռոնալդու: Սա հին հարց է: Երկուսն էլ լավ են խաղում եւ շարունակում են լավ թվեր գրանցել: Ես ավելի տպավորված եմ Մեսսիով, քանի որ նրա խաղաոճում ավելի շատ կախարդանք կա, ավելի մաքուր տաղանդ:

Ռոնալդուի աշխատանքային էթիկան արտակարգ է, գուցե ավելի լավ, քան Մեսսիինը: Բայց Մեսսիի խաղը դիտելը… դա անհավանական է: Ես գիտեմ, թե նա ինչի է ընդունակ, բայց միեւնույնն է, տպավորիչ է»,- Մյուլերի խոսքերն է մեջբերում ESPN-ը:

ԿՀԱՄՈՋԻ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ ՄԻԼԱՆ

«Միլանը» ցանկանում է պայմանագիր կնքել Մադրիդի «Ռեալի» ուկրաինացի դարպասապահ Անդրեյ Լունինի հետ: Այս մասին հայտնում է լրագրող Էկրեմ Քոնուրը:

Աղբյուրի տեղեկություններով՝ «ռոսոներիների» փորձառու կիսապաշտպան Լուկա Մոդրիչը, որը նախկինում երկար տարիներ պաշտպանել է մադրիդյան գրանդի գույները, կփորձի համոզել նախկին թիմակցին միանալ իտալական ակումբին:

Լունինի գործող պայմանագրի ժամկետը «սերուցքայինների» հետ նախատեսված է մինչեւ 2030 թվականի կեսերը: Դարպասապահի տրանսֆերային արժեքը գնահատվում է 18 միլիոն եվրո:

ԺԱՄԱՆՑ ԵՎ ՇՈՈՒ ԲԻՋՆԵՍ

ՏԱՐՎԱ ԴԵՐԱՍԱՆ՝ Time–Ի ՎԱՐԿԱԾՈՎ

Ամերիկացի դերասան Լեոնարդո Դի-Կապրիոն Time ամսագրի կողմից ճանաչվել է տարվա լավագույն արտիստ: Ամսագիրը լուրը հրապարակել է X սոցիալական ցանցի էջում:

«Նա միայն դերասան դառնալ էր ուզում: Լեոնարդո Դի Կապրիոն Time-ի տարվա լավագույն արտիստն է», - գրել են ամսագրի ներկայացուցիչները:

Ամսագիրը բացատրել է իր ընտրությունը՝նշելով, որ նույնիսկ 30 տարվա կարիերայից հետո, որի ընթացքում նա զբաղվել է անկանխատեսելի նախագծերով, 51-ամյա ԴիԿապրիոն շարունակում է սիրված լինել հանդիսատեսի շրջանում, եւ հիմա, թերեւս, ավելի շատ, քան երբեւէ:

Լեոնարդո Դի Կապրիոն արժանացել է Օսկարի, BAFTA-ի, «Ոսկե գլոբուսի» եւ Screen Actors Guild մրցանակի՝որպես լավագույն դերասան «Փրկվածը» ֆիլմում իր դերի համար:

ԷՄԻ ՈՒԱՅՆՀԱՈՒՍԻ ՀԱՅՐԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

27 տարեկանում մահացած Էմի Ուայնհաուսի հայրը՝ Միթչ Ուայնհաուսը, դատի է տվել աղջկա ընկերուհիներին, որոնք գումար են աշխատել երգչուհու հաշվին: Հայտնում է Fast News-ը:

75-ամյա Ուայնհաուսը դատական հայց է ներկայացրել Լոնդոնի Բարձր դատարան՝ 730 000 ֆունտ ստեռլինգի չափով: Նա այդ գումարը պահանջում է դստեր երկու մտերիմ ընկերուհիներից՝ Նաոմի Փերրիից եւ Կատրիոնա Գուրլիից: Նախկին տաքսիստ Միթչ Ուայնհաուսը պնդում է, որ նրանք աղջկա բնակարանից դուրս են բերել անձնական իրեր եւ հետագայում վաճառել աճուրդում:

Սկզբում Ուայնհաուսի ծնողները լավ հարաբերություններ են ունեցել երգչուհու լավագույն ընկերուհիների հետ: Սակայն հարաբերությունները կտրուկ վատացել են 2021 թվականին Լոս Անջելեսում կայացած աճուրդից հետո, որտեղ ներկայացվել էր Էմիի անձնական առարկաներից մոտ 700-ը: Այդ ժամանակ Միթչը պարզել է, որ մոտ 150 իրեր՝ հիմնականում հագուստ, վաճառվել են հենց Փերրիի եւ Գուրլիի կողմից:

Երկու տարի անց Կատրիոնան երկրորդ աճուրդում վաճառել է Ուայնհաուսի հայտնի արյունոտ «բալետկաները»: Այդ վաճառքը նրան բերել է 3000 ֆունտ եկամուտ:

Էմին մահացել է առանց կտակի, ուստի նրա ունեցվածքը ժառանգել է Միթչը: Նա պահանջել է, որ աղջկա ընկերուհիներն իրենց ստացած գումարը փոխանցեն Էմի Ուայնհաուսի բարեգործական հիմնադրամին՝ Կարիբյան Սենթ Լյուսիա կղզում դպրոց կառուցելու համար:

Բացի այդ, դատարանի որոշմամբ հրապարակվել են Նաոմիի եւ Կատրիոնայի նամակագրությունները լոսանջելեսյան աճուրդավարներից մեկի հետ, որտեղ աղջիկները ծաղրում են իրենց ընկերուհու հորը:

● *Դեկտեմբերի 13-ին՝19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չաո» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 3.000-5.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Հաշմանդամ երեխային կամ 1-ին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվո՞ւմ է աշխատանքային ստաժում: Եվ կցանկանայի նաեւ տեղեկանալ՝ երեխային խնամելու ժամանակահատվածը ինչպես է հաշվառվում աշխատանքային ստաժում:

Երեմ Հակոբյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հակոբյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ աշխատանքային ստաժի առկայության դեպքում հաշմանդամ երեխայի խնամակալության ժամանակաշրջանը մինչեւ երեխայի 18 տարին լրանալը կամ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակաշրջանը հաշվառվում է ծնողի, որդեգրողի, խնամակալի աշխատանքային ստաժում, եթե նա ունի խնամարկյալի հաշմանդամության ժամանակահատվածը հաստատող տեղեկանք, իսկ խնամակալի դեպքում՝ նաեւ խնամակալ ճանաչված լինելու եւ խնամակալության ժամանակահատվածի մասին տեղեկանքներ, սակայն տասը տարուց ոչ ավելի՝ մինչեւ կենսաթոշակ նշանակելն ընկած ժամանակահատվածում:

Սահմանված աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային ստաժում հաշվառվում են նաեւ ծնողներից մեկի՝ մինչեւ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի: Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակի չափը հաշվարկելիս (վերահաշվարկելիս) աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչեւ 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների ճանաչումները:

Հենրի Սաղաթելյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջեւ ամուսնությունները եւ Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջեւ ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում: Օտարերկրյա քաղաքացիների միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ամուսնությունը կնքվում է Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկներում: Օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների հյուպատոսական հիմնարկներում կնքված ամուսնությունը Հայաստանի Հանրապետությունում վավերական են փոխադարձության պայմաններով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գավառի՝ Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի այս 25 շնորհալի սաները հաջողությամբ մասնակցել են «Մինորա» Գլոբալ Արտ Ֆեստ միջազգային մրցույթ-փառատոնին՝ հանդես գալով դաշնամուրային, վոկալ, դուդուկի եւ քանոնի բաժիններում:

Սաները վերադարձել են մրցանակային տեղերով եւ դիպլոմներով:

Գավառ համայնքում շուքով են դիմավորել մրցանակակիրներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 4 - 8 + 1 + 4
Կոտայքի լեռներ	- 3 - 6 + 1 + 3
Կոտայքի նախալեռներ	+ 1 + 3 - 1 + 2
Գեղարքունիք	- 4 - 9 0 + 4
Լոռի	- 3 - 6 + 5 + 8
Տավուշ	0 + 4 + 6 + 9
Արագածոտնի լեռներ	- 4 - 8 + 1 + 3
Արագածոտնի նախալեռներ	- 2 + 3 + 4 + 7

Արարատ	+ 2 + 4 + 6 + 9
Արմավիր	+ 1 + 3 + 6 + 9
Վայոց ձորի լեռներ	- 3 - 6 0 + 3
Վայոց ձորի նախալեռներ	0 + 4 + 6 + 9
Սյունիքի նախալեռներ	- 2 - 6 + 5 + 8
Սյունիքի հովիտներ	+ 1 + 4 + 8 + 11
ԼՂՀ	+ 1 + 2 + 7 + 9
Երեւան	+ 2 + 3 + 5 + 6

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.12.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*